ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ
համայնք, գ. Սարչապետ, Հեռ. (077)867459 ,
sarchapet.lori@mta.gov.am

N 420-18
26 հոկտեմբեր 2018թ.

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Կից Ձեզ եմ ներկայացնում Սարչապետ համայնքի ղեկավարի 25.10.2018 թ. թիվ 184-Ա որոշումը:

Առդիր՝ 1 թերթ:

Համայնքի ղեկավար՝ **Բորիս Բարոյան**

Կապ. '

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Սարչապետ, (077)867459 sarchapet.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 184-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՊՐԻՎՈԼՆՈՅԵ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-092-0023-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՏՆԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳԵՎՈՐԳ ՀԱՅԿԱԶԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ըստ դրա գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին>> N 2387-Ն որոշումը, <<Հայաստանի ազգային արխիվ>> ՊՈԱԿ Ստեփանավան տարածքային ներկայացուցչության 08.10.2018 թվականի Հ-813 արխիվային տեղեկանքը, քաղաքացի Գևորգ Մանուկյանի (նույնականացման քարտ՝ 001577758, տրված՝ 20.05.2015 թվականին) դիմումը, <<ՄԵԼ ԵՎ ՄԻԼ>> գեոդեզիայի և քարտեզագրության ՍՊԸ-ի կողմից կազմված հողամասի և շինությունների հատակագծերը, 2018 թվականի հունիսի4-ին կայացրած դատարանի վճիռը՝ գործ թիվ ԼԴ3/0191/02/18, նկատի ունենալով, որ տնատիրության սպասարկման համար օրինական հատկացված 0.1266 հա հողամասը և կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Հաշվի առնելով, որ բնակելի տունը և օժանդակ շինությունները կառուցվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը (1935թ.)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Օրենքի ուժով ճանաչել Գևորգ Հայկազի Մանուկյանի սեփականության իրավունքը ՀՀ Լոռու մարզի Սարչապետ համայնքի Պրիվոլնոյե բնակավայրի 06-092-0023-0001 կադաստրային ծածկագրով տնատիրության սպասարկման համար անհրաժեշտ 0.1266 հա մակերեսով հողամասի նկատմամբ:

2. Հողամասի չափերը որոշվում են Սարչապետ համայնքի ղեկավարի կողմից հաստատված և <<ՄԵԼ ԵՎ ՄԻԼ>> գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն ՍՊԸ-ի կողմից կազմված հատակագծով:

3. Ճանաչել Գևորգ Հայկազի Մանուկյանի սեփականության իրավունքը ՀՀ Լոռու մարզի Սարչապետ համայնքի Պրիվոլնոյե բնակավայրի 06-092-0023-0001 կադաստրային ծածկագրով 0.1266 հա հողամասի վրա գտնվող բոլոր շինությունների նկատմամբ համաձայն <<ՄԵԼ ԵՎ ՄԻԼ>> գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն ՍՊԸ-ի կողմից կազմված հատակագծի:

4. Տնատիրությանը տալ փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Սարչապետ համայնք, գ.Պրիվոլնոյե, փողոց 2, տուն 58:

5. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանմունքում:

6. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

Համայնքի ղեկավար՝ **ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ**

2018թ. հոկտեմբեր 25
գ.Սարչապետ